ԻՄ ՀՈԳԻՆ ՊԻՏԻ ԹԱՓԵՄ ԱՄԷՆ ՄԱՐՄՆԻ ՎՐԱ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԳՈՐԾ. 2:17-21

17 Եւ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին, ասում է Աստուած, որ իմ Հոգին պիտի թափեմ ամէն մարմնի վրա, եւ ձեր որդիներն ու ձեր դուստրերը պիտի մարգարէանան. ձեր երիտասարդները տեսիլքներ կ՚տեսնեն, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն: 18 Եւ իմ ծառաների վրա եւ իմ աղախինների (անգլերեն երկուսի վրա էլ տղամարդկանց և կանանց) վրա էլ այն օրերում իմ Հոգին կ՚թափեմ, եւ կ՚մարգարէանան: 19 Եւ նշաններ կ՚տամ վերեւը երկնքում, եւ նշաններ ներքեւը երկրում, աշխարհը արյունով, կրակով և թանձր ծխով պիտի լցվի: 20 Արեգակը պիտի խավարի, եւ լուսինն արյան գույն պիտի ստանա, նախքան Տիրոջ մեծ եւ փառահեղ օրվա գալը: 21 Եւ կ՚լինի, ամեն ով որ Տիրոջ անունը կ՚կանչի՝ կ՚փրկվի:

1. ԱՅՍ ԽՈՍՏՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՀԱՄԱՐ Է:

Նպատակը հետևյալն է. Համաշխարհային ավետարանչություն.

Բայց դուք զօրություն կ՚առնէք՝ երբոր Հոգին ձեզ վրա կ՚գա, եւ իմ վկաները կ՚լինիք Երուսաղէմում եւ բոլոր Հրէաստանի եւ Սամարիայի մէջ մինչեւ երկրի ծայրերը:

- ***Տեսիլք 2025 թվականի համար.***

  Մինչև 2025 թվականը, սկսված են լինելու Աստվածաշնչի թարգմանության նախագծեր Երկիր մոլորակի բոլոր լեզուներով:

  Ընդհանուր լեզուներ աշխարհում՝ 7,394: 7,316

  2023 թվականի սեպտեմբերի դրությամբ ամբողջ Աստվածաշունչը թարգմանվել է 736 լեզուներով, Նոր Կտակարանը թարգմանվել է ևս 1,658 լեզուներով, իսկ Աստվածաշնչի ավելի փոքր հատվածները թարգմանվել են 1,264 այլ լեզուներով՝ ըստ Wycliffe Global Alliance-ի:

  3658 լեզուներ՝ ունեն Սուրբ Գրությունների որոշ թարգմանություններ:

  Աշխարհի բոլոր մարդկանց մինչև 97,4 տոկոսը հասանելի է առնվազն Սուրբ Գրություններին, ընդ որում մինչև 80 տոկոսն ունի ամբողջական Աստվածաշունչ, իսկ 91 տոկոսը՝ առնվազն Նոր Կտակարան: Այս թվերն արագորեն աճում են:

- ***Համաշխարհային ավետարանչություն.***

  Մինչև 2033 թվականը ամեն մարդ այս մոլորակում, ով Ավետարանը հասկանալու կարողություն ունի, կլսի այն, եթե մեր օրերի ավետարանչական տենդենցներն ընթանան իրենց հունով: Մարվին Բիտտինգեր

- *34,000 նորադարձ ամեն օր Հարավային Աֆրիկայում*
- *28-37,000 նորադարձ ամեն օր Չինաստանում*
- *23-25,000 նորադարձ ամեն օր Աֆրիկայում*
- *16,000 մուսուլման դարձի են գալիս Քրիստոսին ամեն օր*
- *Ամեն ժամ 667 մուսուլման քրիստոնեություն է ընդունում*
- *Ամեն տարի 6 միլիոն մուսուլման քրիստոնեություն է ընդունում:*

Ամբողջ աշխարհում. *174,000 նորադարձ ամեն օր՝ ըստ «Համաշխարհային ավետարանչական շարժման» Դեյվիդ Բ. Բարեթի և Թոդ Մ. Ջոնսոնի:*

Սա ճշմարտապես ամենաոգեշնչող ժամանակն է ողջ պատմության մեջ, որի ընթացքում կարելի է ապրել և լինել Մեծ Հանձնարարականի մասնիկը:

Բայց որտեղ մեղքն ավելի եղավ, այնտեղ շնորհն առավել շատացավ (Հռ. 5:20):

2. ԱՅՍ ԽՈՍՏՈՒՄԸ ՁԵԶ ԵՎ ՁԵՐ ՈՐԴԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ Է:

իմ Հոգին պիտի թափեմ ամէն մարմնի վրա.

ձեր որդիների ու ձեր դուստրերի...

ձեր երիտասարդների և ձեր ծերերի...

Իմ ծառաների վրա և Իմ աղախինների...

- ***Յուրաքանչյուր Քրիստոնյա կանչված է Աստծո կողմից և պետք է կատարի Աստծո կամքը:***

Որովհետև այս խոստումը <u>ձեզ</u>, <u>ձեր</u> <u>զավակների</u> և <u>բոլոր այն հեռավորների համար է</u>, որոնց մեր Տեր Աստվածը կանչելու է (Գործք Առաքելոց 2:37-39):

Թվոց 11-ը մի հետաքրքիր պատմության մասին է նշում երբ իսրայելացիները թափառում էին անապատում, նրանք այնքան բողոքներ ներկայացրեցին Մովսեսին մինչ նա դիմեց Աստծուն ասելով որ այլևս չի կարող այս գործը շարունակել (հմ.14):

Ես միայնակ չեմ կարող կրել այս ամբողջ ժողովրդին. դա շատ ծանր է ինձ համար (Թվոց 11:14):

Աստված պատասխանեց Մովսեսին. Թվոց 11:16-17

*Իսրայելի ծերերի միջից ինձ համար հավաքի՛ր յոթանասուն հոգի, որոնց դու ճանաչում ես որպես ժողովրդի ծերերի և գլխավորների: Նրանց վերցրու բե՛ր ժողովի վրան, և նրանք այնտեղ թող կանգնեն քեզ հետ: Ես կիջնեմ այնտեղ, կխոսեմ քեզ հետ և **քեզ վրա եղած հոգուց կառնեմ** ու կդնեմ նրանց վրա, որպեսզի նրանք քեզ հետ միասին կրեն ժողովրդի բեռը, և դու միայնակ չկրես դա:*

Թվոց 11:25-29 – 25 Տերն իջավ մի ամպով և խոսեց Մովսեսի հետ, առավ նրա վրա եղած Հոգուց և այն դրեց յոթանասուն ծերերի վրա: 26 Հենց որ Հոգին իջավ նրանց վրա, նրանք մարգարեացան, բայց չշարունակեցին:

*Բանակի մեջ մնացել էին երկու հոգի, որոնցից մեկի անունը **Ելդադ էր**, իսկ մյուսի անունը՝ **Մովդադ**: Հոգին հանգչեց նաև նրանց վրա: Նրանք ևս այդ գրանցվածներից էին, սակայն վրան չէին եկել և մարգարեություն էին անում բանակում: 27 Մի պատանի վազեց, պատմեց Մովսեսին և ասաց. Ելդադն ու Մովդադը մարգարեություն են անում բանակում: 28 Նավեի որդի Հեսուն՝ Մովսեսի ընտրյալ ծառան, պատասխանեց և ասաց. Տե՛ր իմ Մովսես, արգելի՛ր նրանց: 29 Մովսեսն ասաց նրան. Ի՞նձ համար ես նախանձում. երանի թե Տիրոջ ամբողջ ժողովուրդը մարգարեներ լինեին, և Տերը նրանց վրա դներ իր Հոգին:*

- *Ես էլ Մովսեսի պես ցանկանում եմ որ յուրաքանչյուր ծառայությունների ժամանակ բոլորս խորապես լցվենք Սուրբ Հոգով, որտեղ կլինեն մարգարեություններ և կգործեն Հոգու պարգևները եկեղեցու շինության համար:* ***Իսկ ի՞նչ է մեզ խանգարում.***

- *Աստվածաշնչը հայտնում է որ Աստված մարդկանց երազներ ու տեսիլքներ է հայտնում պատմության այն կարևոր պահերին որ իր գործը առաջ մղի երկրի վրա: Պողոս Առաքյալը իր տեսիլքի մեջ տեսավ մի Մակեդոնացի մարդու (Գործք 16:9), և այդ տեսիլքի ժամանակ նա լսեց այս միսիոներական կանչը, որն ասաց* ***«Անցիր Մակեդոնիա՝ եւ օգնիր մեզ»:***

  Պողոս Առաքյալն ասաց «Տէրը հրավիրում է մեզ, որ ավետարանենք Մակեդոնիաայում բնակվող ժողովուրդին» (Գործք 16:10):

- *Ես անընդհատ երազում եւ պատկերացնում եմ ամեն տեսակ արթնությունների մասին, և տեսնում եմ թե ինչպես տասնյակ հազարավոր երիտասարդներ հանկարծակի մտնում են իրենց առաքելական կոչման մեջ քարոզելու ավետարանը...*

3. ԱՅՍ ԽՈՍՏՈՒՄԸ ԳԱԼԻՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ Է:

20 Արեգակը պիտի խավարի, եւ լուսինն արյան գույն պիտի ստանա, նախքան Տիրոջ մեծ եւ փառահեղ օրվա գալը:

Մենք կարող ենք փորձել շեղել մեր ուշադրությունը այս համարի շուրջ, բայց իրականությունը մնում է նույնը սա պետքէ կատարվի Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ: Այս համարները երբեք չեն կատարվել Հովել մարգարեի օրերում: Եվ չկատարվեցին Պենտեկոստէի օերում, և նույնիսկ նրանից հետո:

Պետրոս առաքյալն ասում է որ «Տէրը չի ուշացնի իր խոստումը, ինչպէս կարծում են ոմանք, թէ ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդէպ. քանզի չի ուզում, որ որեւէ մէկը կորստեան մատնուի, այլ ուզում է, որ ամէնքը ապաշխարեն» և «Տիրոջ համբերատարությունը փրկություն համարեցէք, ինչպէս որ մեր սիրելի եղբայր Պողոսն էլ գրեց ձեզ» 2 Պետ. 3:7,15:

4. ԱՅՍ ԽՈՍՏՈՒՄԸ ԽՈՍՈՒՄ Է ՔՈ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

«Եւ պիտի լինի, որ ամեն ով որ կանչէ Տիրոջ անունը, կփրկուի.» (Հովել 2:32):

- *Այս տեքստը այնքան կարեւոր է որ այն նշված է Աստվածաշնչում երեք անգամ:*

  Հովել 2:28-ում,

  Գործք 2:21-ում,

  Հռոմեացիների 10:13-ում:

  Հռ.10:14-15 – Արդ ինչպե՞ս կկանչեն նրան, ում չհավատացին, կամ ինչպե՞ս կհավատան նրան, ում մասին չլսեցին, կամ ինչպե՞ս կլսեն առանց քարոզչի: Եվ ինչպե՞ս կքարոզեն, եթե չուղարկվեն: Ինչպես որ գրված է. Ի՜նչ գեղեցիկ են նրանց ոտքերը, ովքեր բարի ավետիսն են քարոզում (հմմտ. Ես. 52.7):

- *Այս երեք համարներում Աստված մտադիր է կատարել համընդհանուր առաջարկ ամբողջ մարդկության փրկության համար իր Որդու մահվան եւ հարության միջոցով: Աստված ցանկանում է ամեն ոք ընդունի Հիսուսին որպես անձնական Տեր և Փրկիչ և իր Հոգին կթափի յուրաքանչուր անձի վրա: Եվ հիշեք որ յուրաքանչյուր ոք նշանակում է բոլորին: Ես ուզում եմ քայլել պատմության այն էջը թե ինչպես է Աստված իր Հոգին թափում վերջին օրերում: Ամեն*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ